ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 140 - Ա
03 սեպտեմբերի 2013 թ.

ՄԱՐԶԻ ԾՈՎԻՆԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԼՃԱՇԵՆԻ, ՆՈՐԱՇԵՆԻ, ՉԿԱԼՈՎԿԱՅԻ, ՍԱՐՈՒԽԱՆԻ, ՋԻԼԻ, ԿԱԼԱՎԱՆԻ, ԱԽՊՐԱՁՈՐԻ, ՄԱՔԵՆԻՍԻ, ԼՃԱՎԱՆԻ, ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ԹԹՈՒՋՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. 2013թ. նոյեմբերի 17-ին նշանակել մարզի Ծովինարի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, Ձորագյուղի համայնքի ղեկավարի, Լճաշենի, Նորաշենի, Չկալովկայի, Սարուխանի, Ջիլի, Կալավանի, Ախպրաձորի, Մաքենիսի, Լճավանի, Մարտունու և Թթուջրի համայնքների ավագանիների անդամների հերթական ընտրություններ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ